ՀԱԴՈՐԴՈՒՄՆԵՐ՝

# ՈՍՎԵՏԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Ռ. Պ. ԿՈՆԴԱԿՉՅԱՆ

*Թուրքիայի կառավարող շրջանների գերմանասիրական քաղաքականությունը երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում և հետագայում նրանց կողմնորոշումը դեպի ԱՄՆ-ը, իրենց բացասական ազդեցությունն ունեցան սովետա-թուրքական հարաբերությունների վրա։*

*Թուրքական կառավարողների հակասովետական արտաքին քաղաքականությունը, «Տրումանի դոկտրինային» ու «Մարշալի պլանի» ընդունումը և երկրի ռազմականացումը խոչընդոտում էին երկու երկրների միջև երբեմնի կանոնավոր առևտրական ու տնտեսական կապերի զարգացմանը։ Չնայած Սովետական Միության համառ ջանքերին՝ անկախ քաղաքական հարաբերությունների բնույթից, վերսկսել կանոնավոր առևտրական ու տնտեսական կապերը, այնուամենայնիվ, այդ կապերը երկար ժամանակ նորմալ ընթացք չստացան։*

*Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում ՍՍՀՄ-ի ունեցած բաժինը Թուրքիայի արտաքին առևտրական հաշվեկշռում կազմում էր մեկ տոկոսից էլ պակաս[1]։ Թուրքիայի՝ ՍՍՀՄ կատարած արտահանությունը բաղկացած էր սովետական վարկը[2] մարող ապրանքներից։ Թուրքական մամուլի տվյալներով, 1946 թ. ՍՍՀՄ-ը գրավում էր 22-րդ տեղը Թուրքիայի արտահանման և 35-րդ տեղը՝ ներմուծման մեջ[3]։*

*Սովետա-թուրքական առևտրական կապերը հետզհետե սկսեցին աշխուժանալ։ Դա ուներ իր մի քանի պատճառները։ Կորեական ժողովրդա-դեմոկրատական Հանրապետության դեմ ամերիկյան իմպերիալիզմի սանձազերծած ագրեսիան սկզբնական շրջանում որոշ չափով ավելացրեց պահանջը գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ։ Բայց պատերազմական գործողությունների դադարեցումը նվազեցրեց այդ պահանջը, որը բացասաբար անդրադարձավ Թուրքիայի արտահանության վրա։ Արտաքին շուկաներում այն սկսեց հանդիպել օրեցօր աճող դժվարություններ։ Այսպես, օրինակ, Թուրքիայի արտաքին առևտրական պակասուրդն, արդեն 1952 թ., կազմեց 540,4 մլն. թ. լիրա[4], իսկ 1950—1959 թթ. ընթացքում՝ ավելի քան 3 միլրդ. թ. լիրա։ Թուրքական որոշ գործարար օրշաններ սկսեցին հիասթափություն ապրել արևմտյան երկրների հետ միակողմանի առևտրական կապերի պահպանման նկատմամբ։ Սովետական Միության և Թուրքիայի միջև առևտրական կապերի խզումը հարվածում էր թուրքական առևտրականների ու վաճառականների շահերին։*

*Առևտրական կապերի վերականգնմանը նպաստեցին նաև ՍՍՀՄ-ի կառավարության որոշակի քայլերը՝ երկու երկրների դիվանագիտական հարաբերությունների կանոնավորման ուղղությամբ։*

*1953 թ. սեպտեմբերի 14-ին Անկարայում հայտարարվեց, որ համաձայնագիր է ստորագրվել, Հոկտեմբերյանի ջրամբարտակի շինարարության հետ կապված վերջնահաշվի մասին[5]։*

*Միաժամանակ թուրքական կողմը շարունակում էր մարել իր պարտքը սովետական վարկի դիմաց։ Վերոհիշյալ ֆինանսական հաշիվների լուծումը ևս բարենպաստ ազդեցություն ունեցավ սովետա-թուրքական առևտրական կապերի վերականգնման և կանոնավորման գործում։*

*Անհրաժեշտ է նշել, որ նախապատերազմյան ժամանակաշրջանում սովետական արտաքին առևտրական կազմակերպությունները, ճիշտ է ոչ կանոնավոր կերպով, առևտրական գործարքներ էին կնքում թուրքական առանձին ֆիրմաների հետ։ ՍՍՀՄ-ը Թուրքիայից գնում էր ծխախոտ, վալոնեա և այլն։ 1951—1952 թթ. ՍՍՀՄ-ը Թուրքիայից գնեց մեծ քանակությամբ ծխախոտ, որի*

---

[1] В. П. Смирнов, Турция, М., 1956, стр. 85.

[2] *Խոսքը 1932 թվականի մայիսին Թուրքիային 8 մլն դոլլար (ոսկով) դիմարով տրամադրված սովետական վարկի մասին է —Ռ. Կ.։*

[3] „Cumhuriyet", 6 VIII, 1957.

[4] „Ulus", 8 IX, 1953.

[5] „Cumhuriyet", 15 IX, 1953.

արտահանման հարցում Թուրքիան մեծ դժվարությունների էր հանդիպում։ Արդեն 1953 թ. օգոստոսի 29-ին կառավարությունը առևտրական շրջաններին թույլատրեց ՍՍՀՄ արտահանելու 75 հազար գլուխ մանր և 7500 խոշոր եղջերավոր անասուն[6]։ Այսպիսով, երկու երկրների միջև 1953 թվականից վերսկսվեցին կանոնավոր առևտրական կապեր։

1954 թ. փետրվարին ՍՍՀՄ պետբանկը և Թուրքիայի Մերքեզբանկը (կենտրոնական) պայմանավորվեցին փոխադարձ վարկավորումը սահմանել 300 հազար ֆ. ստեռլինգ գումարի չափով, որը կոչված էր թեթևացնելու առևտրական գործարքների իրականացումը։ Նույն թվականի փետրվարին, ՍՍՀՄ-ը Թուրքիայից գնեց 5000 կգ ծխախոտ[7], իսկ նոյեմբերին՝ 550000 կգ առաջին տեսակի ծխախոտ[8]։ Թուրքական գործարար շրջանների օրգան «Էկոնոմի գազեթեսին» գոհունակությամբ նշում է, որ «ռուսները պետք է մեծ քանակությամբ ծխախոտ և քիշմիշ գնեն»[9]։

Այնուհետև, երկարատև ընդմիջումից հետո Սովետական Միությունը մասնակցեց Իզմիրը միջազգային տոնավաճառին (1954 թ. օգոստոս-սեպտեմբեր), որը ևս նպաստեց երկու երկրների միջև առևտրական կապերի կանոնավորմանը և հետագա ընդլայնմանը։ Վերջապես, 1954 թ. հոկտեմբերին Անկարայում սովետական դեսպանի ու Թուրքիայի էկոնոմիկայի ու առևտրի մինիստրի միջև տեղի ունեցած բանակցություններից հետո որոշվեց վերականգնել 1937 թ. հոկտեմբերի 8-ի առևտրա-վճարային համաձայնագիրը, որը պատերազմի ընթացքում չեղյալ չէր հայտարարվել և իր ուժը չէր կորցրել[10]։ Միաժամանակ երկու կողմերը համաձայնեցին, որ Սովետական Միությունը Թուրքիայից 106 հազար գլուխ մանր և 15 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասուն ներմուծի[11]։

Եթե թուրքական որոշ առևտրական ու գործարար շրջաններ գոհունակությամբ ընդունեցին ՍՍՀՄ-ի հետ առևտրական կապերի վերականգնումը և նույնիսկ բացահայտ շահագրգռվածություն ցուցաբերեցին արտահանման ապրանքային կազմի ընդլայնման հարցում, ապա արևմտյան երկրների մամուլը խիստ թշնամանքով ընդունեց այն։ Անգլիական «Սպեկտեյտոր» հանդեսը չթաքնված զայրույթով գրում էր. «Առասպելներ են պատվում խորհրդավոր գնացքների շարժման մասին մինչև ռուսական սահմանը»[12]։ Իսկ «Նյու-Յորք Թայմս»-ը իր հերթին նշում էր. «ՍՍՀՄ-ը ձգտում է օգտագործել Թուրքիայի տնտեսական դժվարությունները, առաջարկելով նրան ծայր աստիճանի անհրաժեշտ ապրանքներ, լայն բարտերայի[13] համաձայնության հիման վրա»[14]։ Թերթը միաժամանակ անվստահություն էր սերմանում երկու երկրների երկկողմանի շահավետ առևտրական կապերի նկատմամբ։

1953—1954 թթ. ընթացքում ՍՍՀՄ այցելեցին թուրքական մի շարք ֆիրմաների, բանկերի ու պետական տնտեսական կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք ծանոթացան սովետական արտահանման ապրանքների նմուշներին, արդյունաբերական ապրանքների ցուցահանդեսներին, ձեռնարկություններին և ստորագրեցին մի շարք առևտրական կոնտրակտներ[15]։

Միաժամանակ թուրքական կառավարող շրջանները սկսեցին պաշտոնապես արտահայտել իրենց շահագրգռվածությունը ՍՍՀՄ-ի հետ առևտուրը վերականգնելու և կանոնավորելու հարցում։ Օրինակ, Եվրոպայի համար ՄԱԿ-ի տնտեսական հանձնաժողովում Թուրքիայի ներկայացուցիչը 1954 թ. մարտի 22-ին հայտարարեց, որ ՍՍՀՄ-ի հետ առևտուրը իր երկրի համար ունի մեծ նշանակություն ու նշեց Թուրքիայի շահագրգռվածությունը ՍՍՀՄ-ի հետ առևտրի հետագա ընդլայնման հարցում։ Այն նույն թվականի դեկտեմբերի վերջերին Թուրքիայի տնտեսության և առևտրի մինիստրության ներկայացուցիչը հանդես եկավ մի հայտարարությամբ, ուր նշվում էր, որ «Ռուսաստանը հանդիսանում է Կարսի շրջանի անասունի արտահանման հիմնական շուկան»[16]։

Հետագա տարիներին առևտուրը երկու երկրների միջև կանոնավոր բնույթ ստացավ։ Սովետա-թուրքական առևտրական կապերը ընդլայնելու նպատակով՝ 1956 թ. ՍՍՀՄ-ը նույնիսկ հան-

---

6 „Cumhuriyet", 15 XI, 1953.
7 „Ekonomi gazetesi", 16 II, 1954.
8 „Ekonomi gazetesi", 8 XI, 1954.
9 „Ekonomi gazetesi", 13 IV, 1954.
10 „Cumhuriyet", 12 XI, 1954.
11 „Ekonomi gazetesi", 11 XI, 1954.
12 „Spectator", 2 XI, 1951, p. 562.
13 Փոխանակային առևտուր —Ռ. Կ.։
14 „The New-York Times", 14 XI, 1954.
15 „Ekonomi gazetesi", 5 II, 1954; 16 XI, 1954.
16 „Halkci", 20 XII, 1954.

դես եկավ Թուրքիային ապառիկ մեքենական սարքավորում վաճառելու նախաձեռնությամբ, այն հետագայում թուրքական ապրանքներով մարելու պայմանով։ 1957 թ. ևս Սովետական Միությունը մի շարք առաջարկություններ արեց Թուրքիային առևտրական վարկ տրամադրելու և ապառիկ առևտուր ծավալելու ուղղությամբ։ Նույն թվականի մայիսին ՍՍՀՄ դեսպանը էմլյաք-վեկրեդի (հիպոտեկային — վարկային) բանկին առաջարկեց 5 մլն. դոլլարի առևտրական վարկ 3 տարի ժամկետով։[17] Վարկի դիմաց նախատեսվում էր Թուրքիա արտահանել գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ, շինանյութեր, ճանապարհային և շինարարական մեքենաներ։ ՍՍՀՄ-ը թուրքական «Պետրոլ ոֆիս»-ին առաջարկեց նաև վառելանյութ հանքային հանածոների փոխարեն։ Սակայն վերոհիշյալ առաջարկությունները մերժվեցին թուրքական կառավարության կողմից։

Չնայած առևտրական կապերի աշխուժությանը և առևտրի ծավալի համեմատական ընդլայնմանը, այնուամենայնիվ, առևտուրը երկու երկրների միջև իրականացվում էր միայն առանձին գործարքների հիման վրա։ Թուրքական կողմը խուսափում էր ընդլայնել առևտրական հարաբերությունները ՍՍՀՄ-ի հետ։

Վերջապես, 1960 թ. մարտի 14-ին ի լրացումն 1937 թ. հոկտեմբերի 8-ի առևտրա-վճարային համաձայնագրի, Անկարայում ստորագրվեց առաջին արձանագրությունը, որով հաստատվում էր արտահանվող-ներմուծվող ապրանքների ցուցակը։ Արձանագրությամբ հաստատված ապրանքային կազմը չէր տարբերվում նախորդ տարիների առևտրի ապրանքային կազմից։ Սակայն հաշվարկումների հիմքում նախկին անգլիական ֆունտ ստեռլինգի փոխարեն առաջին անգամ դրվում էր ամերիկյան դոլլարը[18]։ Ինչպես նշում էր թուրքական մամուլը, երկու երկրների միջև ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը նախատեսվում էր 21 մլն. ամերիկյան դոլլար գումարի չափով[19]։

Առևտրական արձանագրության ստորագրումը գոհունակությամբ ընդունվեց թուրքական առևտրական շրջանների կողմից, քանի որ այն նոր հնարավորություններ էր ստեղծում երկկողմանի շահավետ առևտրի կանոնավորման ընդգծվառում։

1960 թ. մայիսի 27-ին Թուրքիայում տեղի ունեցավ զինվորական հեղաշրջում, որը տապալեց Բայար-Մենդերեսի գլխավորած դեմոկրատական կուսակցության կառավարությունը։ Թուրքական նոր կառավարողները չէին կարող հաշվի չառնել միջազգային իրավիճակը և այն վնասները, որ Թուրքիան կրում էր նախկին կառավարողների ժամանակաշրջանում սովետա-թուրքական հարաբերությունների անկանոն բնույթի պատճառով։

Նույն թվականի հունիս-հուլիս ամիսներին ՍՍՀՄ-ի և Թուրքիայի կառավարության ղեկավարները բարեկամական ուղերձներ փոխանակեցին։

Իրանից անմիջապես հետո ստորագրվեցին մի շարք արձանագրություններ՝ ի լրացումն գործող առևտրա-վճարային համաձայնագրի, որոնք զգալիորեն նպաստեցին ապրանքափոխանակության ծավալի ընդլայնմանը։

Հետո՝ 1961 թ. փետրվարի սկզբներին, ՍՍՀՄ ժամանեց առաջին թուրքական առևտրական պատվիրակությունը, որը բանակցություններ վարեց ՍՍՀՄ առևտրական կազմակերպությունների հետ։ Բանակցությունների վերջում, 1961 թ. փետրվարի 16-ին, ստորագրվեց մեկ տարի ժամկետով երկրորդ արձանագրությունը՝ ի լրացումն 1937 թ. հոկտեմբերի 8-ի առևտրա-վճարային համաձայնագրի։ Արձանագրության մեջ նշվում էր, որ այն ստորագրվում է երկու երկրների ապրանքափոխանակության պայմանների դյուրացման, առևտրի հետագա զարգացման ու հաշվեկշռման նպատակներով։ Այն ճշտում էր արտահանվող ապրանքների ցուցակը, որը հիմնականում կրկնում էր նախորդ տարիների ապրանքափոխանակության կազմը։ ՍՍՀՄ-ը պետք է Թուրքիա արտահաներ 8,750 հազար դոլլարի ապրանք։

Սովետա-թուրքական առևտրական կապերի հետագա ընդլայնմանը նպաստեցին Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Ֆ. Ջ. Էրկինի (1964 թ. նոյեմբեր), պրեմիեր-մինիստր Ս. Հ. Ուրգուպլուի (1965 թ. օգոստոս), Թուրքիայի Ազգային մեծ ժողովի ազգային պալատի նախագահ Ֆ. Բոսոնչլու (1966 թ. օգոստոս) և պրեմիեր-մինիստր Ս. Դեմիրելի (1967 թ. սեպտեմբեր) բանակցությունները Մոսկվայում և ՍՍՀՄ Գերագույն սովետի պատվիրակության ղեկավար Ն. Պոդգորնու (1965 թ. հունվար), ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստր Ա. Գրոմիկոյի (1965 թ. մայիս), ՍՍՀՄ արտաքին առևտրի մինիստր Ն. Պատոլիչևի (1966 թ. օգոստոս), ՍՍՀՄ Մինիս-

---

[17] „Ekonomi gazetesi" 14 V. 1957; „Cumhuriyet", 15 V, 1957.

[18] «Внешняя торговля», № 3, 1960, стр. 57; № 6, 1960, стр. 46—48.

[19] „Ulus", 15 III, 1960.

տրրների սովետի նախագա՝ Ա. Կոսիգինի (1966 թ. դեկտեմբեր) և ՍՍՀՄ Գերագույն սովետի պատվիրակության (1968 թ. ապրիլ) բանակցությունները Անկարայում։

Հետագա տարիներին Սովետական Միության ու Թուրքիայի միջև ստորագրվեցին առևտրական նոր արձանագրություններ, որոնք նախատեսում էին առևտրի ծավալի ու ապրանքային կազմի դգալի ընդլայնում։

1956 թ. հետո ՍՍՀՄ-ի ու Թուրքիայի արտաքին առևտրի դինամիկայի մասին պատկերացում են տալիս ստորև բերվող № 1 և № 2 աղյուսակները։

1. ՍՍՀՄ-ի արտահանումը Թուրքիա 1956—1966 թթ. մլն. ռուբլիներով[20]

| 1955 | 1956 | 1957 | 1958 | 1959 | 1960 | 1961 | 1962 | 1963 | 1964 | 1965 | 1966 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6,7 | 5,4 | 8,1 | 8,5 | 5,0 | 7,4 | 5,2 | 3,9 | 7,8 | 8,9 | 15,0 | 24,7 |

2. ՍՍՀՄ-ի ներմուծումը Թուրքիայից 1955—1966 թթ. մլն. ռուբլիներով[21]

| 1955 | 1956 | 1957 | 1958 | 1959 | 1960 | 1961 | 1962 | 1963 | 1964 | 1965 | 1966 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4,6 | 5,9 | 4,9 | 10,3 | 4,3 | 4,7 | 4,4 | 4,9 | 6,4 | 8,3 | 17,0 | 16,9 |

Աղյուսակներից երևում է, որ սովետա-թուրքական առևտրի ծավալը, 50-ական թվականների համեմատությամբ բավականաչափ ավելացել է բացարձակ թվերով վերցրած, այն, իհարկե, մի քանի անգամ գերազանցում է սովետա-թուրքական առևտրի նախապատերազմյան մակարդակը, բայց զիջում է տոկոսային հարաբերությամբ։

Ետպատերազմյան ժամանակաշրջանում Սովետական Միությունը տնտեսության բնագավառում ձեռք բերեց նորանոր հաջողություններ։ Տնտեսական աննախընթաց վերելքին զուգընթաց, աճել են նաև նրա արտաքին առևտրական հնարավորությունները։

ՍՍՀՄ արտաքին առևտրի ապրանքային կազմի քանակական ու որակական փոփոխությունները, ինքնըստինքյան, իրենց ազդեցությունն ունեցան նաև սովետա-թուրքական առևտրի ապրանքային կազմի վրա։ Սովետա-թուրքական ապրանքափոխանակության վրա որոշ ազդեցություն ունեցան նաև ետպատերազմյան Թուրքիայում տեղի ունեցած տնտեսական տեղաշարժերը։ Այդ ժամանակաշրջանում, Թուրքիայի պետական ու մասնավոր, ինչպես նաև օտարերկրյա պետական ու մոնոպոլիստական կապիտալի միջոցներով այստեղ կառուցվեցին արդյունաբերական տարբեր ճյուղերի մի շարք գործարաններ ու ֆաբրիկաներ։ Այսուհանդերձ, Թուրքիայում չստեղծվեց ծանր արդյունաբերություն։ Ահա թե ինչու, Թուրքիան այժմ ավելի մեծ չափերով է արդյունաբերական սարքավորում ներմուծում, քան անցյալում։

Սովետական Միությունը Թուրքիա է արտահանում արդյունաբերական տարբեր տեսակի սարքավորումներ, առաջին անհրաժեշտության արդյունաբերական ապրանքներ, շինարարական ու ճանապարհաշինական մեխանիզմներ և այլ ապրանքներ, թվով ավելի քան երկու հարյուր տեսակի արտադրանք։ Մինչև 1959 թ. ներառյալ Թուրքիա կատարած ՍՍՀՄ-ի արտահանության կեսը կազմում էին մեքենաներ ու սարքավորումներ, սև մետաղի ձուլվածք, քիմիական արդյունաբերության արտադրանք, անտառանյութ, ցելլյուլոզ, շինարարական փայտ, տարբեր տեսակի թուղթ, ճանապարհաշինական և ավտոգարաժային սարքավորում, լաբորատորային և բժշկական սարքեր։ ՍՍՀՄ-ը Թուրքիա էր արտահանում նաև հաստոցներ, դիզել և դիզել-գեներատորներ, էլեկտրամեքենաներ, տրանսֆորմատորներ, լեռնահանքային, տպագրական, ալրաղացային, տրանսպորտային սարքավորում, էքսկավատորներ, տարբեր տեսակի ավտոմեքենաներ։ Թուրքիայի

---

20 «Внешняя торговля СССР», стат. сборн 1918—1966», М., 1967, стр. 66—67; Ռուբլու սակագինը հաշվարկված է 1961 թ. հունվարի 1-ին սահմանված սակագնով։ Տե՛ս նույն տեղում, էջ XIII։

21 Տե՛ս նույն տեղում, էջ 66—67։

ներմուծման մեջ մեծ տեղ էր գրավում մետաղահատ հաստոցների ներմուծումը ՍՍՀՄ-ից, որի գծով վերջինս գրավում էր 3-րդ տեղը[22]։

Այսպիսով, ՍՍՀՄ-ի արտահանության մեծ մասը կազմում էր ֆաբրիկա-գործարանային սարքավորումը, որը բացատրվում է սովետական տնտեսական ու տեխնիկական օգնությամբ Թուրքիայում ապակու և ցեմենտի գործարանների շինարարության պահանջներով։ Հետագա տարիներին Սովետական Միությունը շարունակում էր Թուրքիա արտահանել նաև նավթ, նավթամթերքներ, մորթի, ցեմենտ և ապակի։ Հատկապես ավելացավ ՍՍՀՄ-ից սև մետաղի և նրա ձուլվածքի արտահանումը։ Միաժամանակ ավելացավ ցելյուլոզի, թղթի, սոդայի, շինանյութերի արտահանումը, սրանք 1964 թ. գրավեցին երկրորդ տեղը ապրանքային ցուցակում[23]։

Ինչ վերաբերում է մեքենաների և արդյունաբերության տարբեր ճյուղերի համար սարքավորման արտահանմանը, ապա վերջիններս շարունակում են կազմել սովետական արտահանման մոտ կեսը։ Թուրքիա կատարվող սովետական արտահանությունը կարող էր ընդլայնվել գյուղատնտեսական մեքենաների, հատկապես տրակտորների հաշվին, որոնք բարձր համբավ են ձեռք բերել այնտեղ։ Սկսած 1963 թ. Սովետական Միությունը դադարեցրեց ապակու արտահանումը Թուրքիա[24], որովհետև այնտեղ կառուցված պատուհանի ապակու գործարանը սկսեց լրիվ բավարարել երկրի ներքին կարիքները։ ՍՍՀՄ-ը դադարեցրեց կամ խիստ կրճատեց այնպիսի ապրանքների արտահանումը, ինչպիսիք էին տեքստիլ արտադրանքը, ցեմենտը, շաքարը, քարածուխը և այլն, քանի որ դրանց արտադրությունը տեղում բավարարում է ներքին շուկայի պահանջները։

Մնալով հիմնականում որպես գյուղատնտեսական երկիր, Թուրքիայի արտահանության ապրանքային կազմում դեռևս գերիշխում է գյուղատնտեսական արտադրանքը, որն իրեն զգացնել է տալիս ՍՍՀՄ կատարած արտահանության մեջ։ Ետպատերազմյան տարիներին Թուրքիան Սովետական Միություն է արտահանել մեծ մասամբ խոշոր և մանր եղջերավոր անասուն, վալեքս (դաբաղանյութ), կաշվեղեն, ծխախոտ, միրգ, կաղին, բուրդ, դափնու տերև, քիշմիշ և բամբակ։ Թուրքիան Սովետական Միությունն է արտահանում մոտ տասնհինգ տեսակի ապրանք։ Այժմ թուրքական կողմը շահագրգռված է ՍՍՀՄ արտահանել նաև արդյունաբերական որոշ արտադրանք՝ բամբակյա և բրդյա գործվածքեղեն[25]։ Անհրաժեշտ է նշել, որ Սովետական Միությունը հնարավորություն ունի Թուրքիայից ներմուծելու այդ ապրանքները ևս, սակայն միայն սովետական արտահանման համապատասխան ավելացման պայմանով։ Նման դեպքում ՍՍՀՄ-ը կարող էր ավելացնել Թուրքիայից համարյա բոլոր ներմուծվող ապրանքների քանակը, ինչպես նաև բամբակ, ձիթենի, գունավոր մետաղներ և այլն[26]։ Այսպիսով, սովետա-թուրքական առևտրի թե՛ ծավալի և թե՛ ապրանքային կազմի ընդլայնումը կախված է Թուրքական կառավարողների հետագա քայլերից։ Ինչքան նրանք ավելացնեն ներմուծումը ՍՍՀՄ-ից, համապատասխանաբար կավելանա վերջինիս ներմուծումը Թուրքիայից։ 1967 թ. մարտին երկու երկրների արտաքին տնտեսական կազմակերպությունների միջև սարքագրվեց համաձայնագիր՝ ՍՍՀՄ-ի տնտեսական ու տեխնիկական օժանդակությամբ Թուրքիայում մի շարք արդյունաբերական ձեռնարկությունների կառուցման ու նորացման մասին, որը բավականաչափ կընդլայնի առևտուրը երկու երկրների միջև։

*

Ապրանքափոխանակության ծավալը երկու երկրների միջև մերթ ավելանում է, մերթ նվազում, մեկ ակտիվ հաշվեկշիռ ունի ՍՍՀՄ-ի համար, մեկ պասիվ։ Այսպես, օրինակ, 1955—1959 թթ. ՍՍՀՄ արտահանումը Թուրքիա կազմել է ընդամենը 33,7 մլն. ռուբլի, իսկ ներմուծումը՝ 30,6 մլն. ռուբլի, կամ համապատասխանաբար տարեկան միջինը 6,7 մլն. և 6,1 մլն. ռուբլի[27]։ ՍՍՀՄ արտահանության գերակշռումը ներմուծման նկատմամբ բացատրվում է նրանով, որ

---

22 «Основные тенденции развития внешней торговли стран Ближнего и Среднего Востока (1950—1969)»; «Бюллетень иностранной коммерческой информации», приложение, № 9. М., 1962, стр. 297. (Այսուհետև՝ «БИКИ», приложение № 9).

23 Որոշ տարիներում, օրինակ՝ 1959 թ. ՍՍՀՄ-ը գրավում էր առաջին տեղը Թուրքիայի ներմուծման մեջ անտառապայտի (սոճի) և ցելյուլոզի գծով։ Տե՛ս «БИКИ», приложение № 9, стр. 308, 309.

24 «Внешняя торговля СССР за 1959—1963 гг.». М., 1965, стр. 418—423.

25 «За рубежом», № 46, 1964, стр. 19.

26 «Экономическая газета», 29 1, 1962.

27 «Внешняя торговля СССР за 1955—1959 гг.». М., 1961, стр. 13.

1958—1959 թթ. ընթացքում Սովետական Միությունը Թուրքիա արտահանեց ֆաբրիկա-գործարանային սարքավորում՝ պատուհանի ապակու և ցեմենտի գործարանների շինարարության համար։ Եվ քանի որ այդ սարքավորման արտահանումը տեղի էր ունենում ապառիկ կարգով, ապա կարելի է ասել, որ սովետական արտահանումը Թուրքիա չուներ ակտիվ հաշվեկշիռ։ ՍՍՀՄ արտահանումը Թուրքիա, մեր հաշվումների համաձայն, կազմում էր նրա ընդհանուր արտահանման միջինը՝ մոտ 0,2%-ը կամ 1/568-րդ մասը, իսկ ներմուծումը Թուրքիայից իր ընդհանուր ներմուծման միջինը՝ մոտ 0,16%-ը կամ 1/600 մասը[28]։ Չնայած այն հանգամանքին, որ ՍՍՀՄ արտահանումը Թուրքիա նրա ընդհանուր արտահանման մեջ կազմում էր չնչին մաս, բայց այն կազմում էր որոշակի մաս Թուրքիայի ներմուծման մեջ։ Այսպես, օրինակ, 1955—1958 թթ. ներառյալ, ՍՍՀՄ-ի բաժինը Թուրքիայի ներմուծման մեջ կազմում էր միջինը մոտ 1,8%, 1950 թ. 0%-ի դիմաց[29]։

Ինչ վերաբերում է ՍՍՀՄ-ի բաժնին Թուրքիայի արտահանման մեջ, ապա այդ նույն տարիների ընթացքում այն կազմում էր միջինը 1,7% կամ մոտ մեկ-վաթսուներորդ մասը, բացառյալ 1958 թ., երբ այն կազմեց 4,6 տոկոս՝ 1950 թ. 0,1%-ի դիմաց[30]։ Հետևաբար, Սովետական Միությունը անհամեմատ ավելի մեծ տեսակարար կշիռ ունի Թուրքիայի արտահանման-ներմուծման մեջ, քան Թուրքիան՝ ՍՍՀՄ-ի։ Ավելին, այն տարիների ընթացքում, երբ ՍՍՀՄ-ը Թուրքիայից ներմուծում էր խոշոր և մանր եղջերավոր անասուն, նա գրավում էր առաջին տեղը Թուրքիայի արտահանման մեջ այդ ապրանքների գծով (1956—1957 թթ.)[31]։

Թուրքիայի ներմուծումը տոկոսներով[32]

| | 1960 | 1961 | 1962 | 1963 |
|---|---|---|---|---|
| ՍՍՀՄ | 1,3 | 1,6 | 1,0 | 1,3 |

Թուրքիայի արտահանումը տոկոսներով[33]

| | 1960 | 1961 | 1962 | 1963 |
|---|---|---|---|---|
| ՍՍՀՄ | 1,5 | 1,3 | 1,4 | 2,0 |

ՍՍՀՄ-ը Թուրքիայի ներմուծման-արտահանման մեջ զբաղվում է ընդհանուր առմամբ՝ 11-րդ և 9-րդ տեղերը համապատասխանաբար[34]։ Սովետական ապրանքների արտահանումը Թուրքիա ավելին կլիներ, եթե Թուրքական կողմը արհեստական արգելքներ չհարուցեր առևտրական արձանագրություններով նախատեսված առևտրի ծավալը իրացնելու հարցում։ Առևտրական արձանագրություններով նախատեսված առևտրի ծավալը չի իրացվել 1960, 1961, ինչպես նաև հաջորդ տարիների ընթացքում։ 1964 թ. իրացվեց նախատեսված ապրանքաշրջանառության ընդամենը 50 տոկոսը[35]։

Սովետա-թուրքական առևտրական կապերը երկկողմանի շահավետ են, բայց առավել շահավետ են Թուրքիայի համար։ Եթե նկատի ունենանք այդ առևտրի պայմանները, ապրանքային կազմը, գները և ՍՍՀՄ-ի տեղը նրա ներմուծման-արտահանման մեջ։ Թուրքական գյուղատնտեսական ապրանքների համար մշտական շուկայի առկայությունը հանձին ՍՍՀՄ-ի, կարևոր նշանակություն ունի նրա գյուղատնտեսության զարգացման համար։ ՍՍՀՄ-ը Թուրքիայից ներ-

---

28 Նույն տեղում, էջ 10, 13։

29 «БИКИ», приложение № 9, стр. 311.

30 Նույն տեղում, էջ 316։

31 Նույն տեղում, էջ 290, 291։

32 «Современная Турция», М., 1965, стр. 331, 330; «Cumhuriyet», 5 XI, 1964.

33 Նույն տեղում։

34 «БИКИ», приложение № 9; стр. 331; «Современная Турция»., стр. 331.

35 „Cumhuriyet", 1 XI, 1964.

հուծում է այնպիսի ապրանքներ որոնց արտահանման կարիքը վերջին խիստ սգում է և որոնց արտահանումը հանդիպում է լուրջ դժվարությունների արևմտյան երկրների շուկաներում։ ՍՍՀՄ-ը արտահանում է այնպիսի ապրանքներ, որոնց կարիքը Թուրքիան մշտապես զգում է։ Թուրքիայի առևտուրը արևմտյան երկրների հետ տեղի է ունենում մշտական պակասորդով, այն դեպքում, երբ նրա առևտուրը ՍՍՀՄ-ի հետ միշտ հավասարակշռված է։ Ինչպես հայտնի է, առևտրական կապերը Սովետական Միության և Թուրքիայի միջև իրականացվում են նետտո-բալանսի հիման վրա, առանց կանխիկ վճարումների։ Այդ առևտուրը օգտակար է նաև իր պայմաններով՝ առևտրական և արտադրական վարկ, վարկի մարում՝ ապառիկ կարգով և ապրանքների արտահանման միջոցով։ Ապրանքափոխանակությունը երկու երկրների միջև նպաստում է Թուրքիայի արտաքին առևտրական կախվածության թուլացմանը արևմտյան երկրներից, այն կարևոր գործոն է նրա տնտեսական անկախությունը ապահովելու ասպարեզում։ Բայց, նույնիսկ նման պայմաններում, թուրքական կառավարող որոշ շրջաններ արհեստական արգելքներ և սահմանափակումներ են ստեղծում սովետա-թուրքական ապրանքափոխանակության ընդլայնման ճանապարհին։ Այդ իսկ պատճառով ՍՍՀՄ-ի արտահանում-ներմուծումը Թուրքիայից դեռ զիջում է Թուրքիայի և ԱՄՆ-ի, ԳՖՀ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի հետ ունեցած նրա առևտրական կապերի ծավալին՝ առանձին-առանձին վերցրած[36]։

Սովետա-թուրքական առևտրի ծավալի և նրա ապրանքային կազմի ընդլայնմանը զգալիորեն խանգարում է թուրքական խոշոր բուրժուազիայի արևմտասիրական քաղաքականությունը։

Սովետական Միության արտաքին քաղաքականությունը ելնում է այն նպատակից, որ առևտրական կապերի զարգացումը տարբեր սոցիալական-քաղաքական կացութեան ունեցող երկրների միջև նպաստում է քաղաքական հարաբերությունների կանոնավորմանն ու զարգացմանը, փոխադարձ վստահության ամրապնդմանը, միջազգային իրադրության առողջացմանը և խաղաղության պահպանմանը։ Թուրքիայի հետ ՍՍՀՄ-ի առևտրական կապերը, այսպիսով, փոխադարձաբար շահավետ են երկու երկրների և հատկապես Թուրքիայի համար։ Թուրքիայի ազգային անկախության ու անվտանգության, ինչպես նաև նրա էկոնոմիկայի հետագա զարգացման շահերը պահանջում են ընդլայնել առևտրական հարաբերությունները Սովետական Միության հետ։

## СОВЕТСКО-ТУРЕЦКИЕ ТОРГОВЫЕ СВЯЗИ ПОСЛЕ ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

Р. П КОНДАКЧЯН

### Резюме

В статье, на основе данных советских и турецких источников, исследован нынешний этап торговых связей между СССР и Турцией. Особое внимание уделено товарному списку торговли и месту Советского Союза в импорте и экспорте Турции, их возможностям и перспективе. Торговля между двумя странами имеет взаимовыгодный характер, в особенности для Турции, если учесть ее условия, товарный список и цены. Советско-турецкая торговля ослабляет зависимость Турции от засилия империалистических монополий, способствует развитию турецкой национальной экономики.

Советский Союз всегда стоял за расширение торговых связей с соседней Турцией, исходя также из того важного фактора, что эти связи могут способствовать развитию добрососедских отношений между двумя государствами.

---

36 «Современная Турция», ...стр. 330, 331